կան հոգաբարձու պ. Ըսնասվիկեան։ Ցույս ունենք, ի հարկէ, որ պ. Լասուսկիին յանձնուած նրանց վաս չէ լինի, ինչպիսի բաղդ չատ անգամ ունի Գանձակը։»

—

Գարձեալ խնդրում ենք մեր բաժանորդներին, որոնք դեռ չեն վճարել «Մշակի» այս տարվայ փոստերը, չուսում ուղարկեն մեզ իրանց վրա մնացած ապառիկները։

—

Սատացանք ԲԱԼԱՆԻՑ հայ-աւետարանական համայնքից 103 բուբլ նեռեանով դամանալով պ. Աւագ Վարդանեանից։ «Բագուի հայ-աւետարանական համայնքի մէջ վանի հայերի կարօտութեան համար հանգանակած 103 բուբլ ուղարկելով ձեզ, խնդրում եմ հասցնել այդ փոքրիկ նուէրը ոբ հարկն է։ Մի և նոյն ժամանակ մեծ ուրախութիւն ենք յայտնում «Մշակի» մէջ հայկական միաբնութեան ընկերութիւն կազմելու մասին յարուցած ազնիւ մտքի վերաբերութեամբ։ Մաղթում ենք Աստուծուց աջողութիւն այդ բարի գործառնութեանը։»

ԸՐՏԵՐԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

—

«Polit. Corresp.» լրագրին Բերլինից գրում են հետեւեալը դեկտեմբերի 2-ից։ Այսպէս էլ, ինչպէս և ուրիշ տեղեր ամենը, որ ուրախ են, որ Գրէյդենիսի Հարցը վերջացաւ։ Այժմ Ճշմարիտ է առաջ է գալիս յունական խնդիրը, բայց սրա և Գրէյդենիսի խնդրի մէջ այն զանազանութիւնը կայ, որ առաջինի լուծումը նախատեսված չէ Բերլինի դաշնագրի մէջ։ 1879 թուականի Բերլինի կոնֆերենցիան ի նկատի ունէր թշնամի կողմերին առաջարկութիւններ անել և թէ վճիռներ կայցնել։ Այդ կոնֆերենցիայի մասին անհրաժեշտ է մտաբերել այն առանձին հանգամանքը, որ նրա կայացնելու համար առաջ Գրանսիան ձայն տուեց, իսկ յետոյ Անգլիան, որովհետև այն ժամանակվայ թիւրքական անգլիական կառավարութիւնը չէր կամենում Յունաստանին բարեկամ երևալ, հետևապէս կոնֆերենցիան մի տեսակ մրցման պատճառ դարձաւ յոյների բարեկամութեան վերաբերութեամբ։ Գրանսիայի առաջարկութիւնը յոյն-թիւրքական սահմանները որոշելու համար պաշտպանվեցաւ Անգլիայից, իսկ այս վերջինի առաջարկութիւնները Ռուսաստանից, բայց միայն այս պնդութիւններից ոչ մէկը չը մտածեց առաջարկութիւնները ոչ մի այդ որոշումները իրագործելու մասին։ Գրգռանքի մինիարութիւնը անպատպ ձեռք առաց յունական խնդրին։ Դեռ ևս շատ քիչ են մեկնված դիպլոմատիական այն յարաբերութիւնները, որոնք եղել էին Յատասանի մինիարութեան նշանակվելու ժամանակ։

Աւելորդ չէ յիշել, որ այն ժամանակ Բերլինից գրում էին «Polit. Corresp.» լրագրին, որ Հարկ թէ Գեսերբրդի մէջ Համեձայնեն նոցից բարձրացնել արևելեան Հարցը Յատասանի օգնութեամբ։ Համաձայնական կուսակցութեան մէջ իսկոյն շարժումներ սկսվեցան։ Բայց Գեսերբրդի Հեղինակութիւն ունեցող շրջանները յայտնեցին, որ այդպիսի գործի սկսելը չատաղանց վատնարար է։ Յատասանի առաջարկութիւնը մերժվեցաւ թէ Ռուսաստանի և թէ Գրանսիայի կողմից։ Գանից յետոյ անդրկական մինիարութիւնը դիմեց այն պնդումներին, որոնք սորարվել էին Բերլինի դաշնագրից։ Լեռօպական պետութիւնները յայտնեցին, որ յունական Հարցը վերօգնական Հարցից առաջ պէտք է մնալ, որովհետև վերօգնական Հարցի վճռելը որոշված է Բերլինի դաշնագրով։ Գրմանական կառավարութեան գլխաւոր կարծիքներն էլ նրանք են, որ Լեռօպայի Համաձայնութիւնը Արևելքի վերաբերութեամբ միայն Բերլինի դաշնագրի վրա պէտք է հիմնվեն։ Յունական Հարցը չէ կարելի այնպէս վճռել, ինչպէս վերօգնական խնդիրը։ Պետութիւնները կառաջարկեն Յունաստանին, որ նա չատաւոր լինի, իսկ Թիւրքիային, որ նա գիջումներ անի։ Ինչպէս երևում է, եթէ պետութիւնները յետ կանգնեն Բերլինի կոնֆերենցիայի վճիռներից, յունական կառավարութիւնը սահմանված կը լինի պատերազմ յայտնել Թիւրքիային։ Մի այսպիսի բան Անգլիայից գրել էին «Standard» լրագրին, որի թղթակիցը, պատմելով յունական թագաւորի ասած խօսքերը գերմանական դեսպանին, ուեւյացնում է, թէ յոյները Համոզված են, որ եթէ Յունաստանը զրկվի Լեռօպական պետութիւնների բարեկամութենից, դրա պատճառը իշխան Բիսմարկի ազդեցութիւնը կը լինի, որ կամենում է պաշտպանել Աւստրիայի փառասէր ձգտումները։ Յոյները Աւստրիայի փառասէր ձգտումներ անուանում են այն, իբր թէ նա կամենում է ընդարձակել իր երկիրը մինչև Լգէ լեան ծովը։ Բայց այս ցանկութիւնը յոյները իրանց Համար ի՞նչի են արդեօք Համարում։ Արա պատճառն այն է, որ Ամիենքի մէջ ցանկանում են մի ժամանակ ընդարձակել Յունաստանը մինչև Լգէ լեան ծովը և Ս. Գոլիս։

Այսպէս են մեկնում Գերմանիայի և Աւստրիայի հրաժարվելը յունական պահանջների պաշտպանելուց, որոնց հետևանքը պէտք է թիւրքա-յունական պատերազմը լինի։ Դրանք, որ երևակայութիւնով են ապրում, չեն կարող Գերմանիայի և Աւստրիայի վարմունքը կատարութիւնը պահպանելու ցանկութեամբ մեկնել։

Լօնդոնի „Daily News“ լրագրին հաղորդում են Բերլինից, որ իշխան Բիսմարկ յունական խնդրի վերաբերութեամբ այն կարծիքի է, որ ամենավայ ընթացքում մրձուագական գործողութիւններ չը պէտք է սկսել և Հարցը մոռնել մինչև գարունը։ Եթէ այն ժամանակ էլ թիւրքիան զիջում չի անի, կարելի է ծովային ցոյց անել, կամ թիւրքիայի դէմ սահմանական միջոցներ գործադրել։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳՐԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. Պետերբուրգ, 9 դեկտեմբերի։ „Herold“ լրագիրը հաղորդում է. Լօղօվ-Սեվաստօպոլն երիմեանուցը Պրպղօղոնան կայարանից մի քանի վերստ հեռու Շարուհօվին պատկանող ստրկի մէջ, նոյն իսկ ճանապարհի ձիր մօտ, Գաղաւոր Գարսի Լիվադիայից վերադառնալուց քիչ առաջ, գտնված են բելտների տակ փորված-ներ։ Սպասաւորներ Շարուհօվ ինքնասպանութիւն գործեց։ Փորուածք անելու մէջ կասկածում են նրա որդուն, որ դեռ գրտնված չէ։

Ս. Պետերբուրգ, 9 դեկտեմբերի։ „Herold“ լրագիրը հաղորդում է. Տպագրված գրքերի զլխաւոր կառավարութիւնը ուղարկեց ցենզուրական բոլոր վարչութիւններին մի շրջաբերական, որ բռնադրվում է ճիշդ հրահանգներ ցենզուրական կանոնների գործադրութեան մասին։ Այդ հրահանգների նպատակն է աւելի կանոնաւորել ցենզուրայի և գաւառական մամուլի յարաբերութիւնները։

Լօնդոն, 9 դեկտեմբերի։ Բեկինգբերի մօտ, Իրլանդիայի մէջ, երկի երեկոյան սպանված է կարուածական կապիտան Միլլերը։ Մարդասպանները, թօղ փց մարդ, անհետացել են։ Սպանութիւնը մեկնվում է հողի մասին եղած վէճով։

Ս. Պետերբուրգ, 9 դեկտեմբերի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 95 ր. 37 կ., երկրորդ 92 ր. 75 կ., երրորդ 93 ր. 25 կ., չորրորդ 92 ր. 87 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 224 ր. 50 կ., երկրորդ 218 ր. 50 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 90 ր. 62 կ., երկրորդ 90 ր. 40 կ., երրորդ 90 ր. 50 կ., ոսկի 8 ր. 5 կ։ Ռուսաց 1 բուբլ Լօնդոնի վրա արժէ $24^1/_2$ պէնս, Ամստերդամի վրա 124 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ $208^1/_2$ մարկ, Փարիզի վրա $258^1/_2$ ֆրանկ։

Ս. Պետերբուրգ, 9 դեկտեմբերի։ „Голосъ“ լրագրին Կ. Պոլսից հեռագրում են դեկտեմբերի 8-ից, որ այսանդ բերված են իբրև պետական յանցաւորներ և բանտարկված են Խօջա-բէյ և Միրիդիաների իշխան Պրինկօ։ Օգէսսայից նոյն լրագրին հեռագրում են, որ լրագրական լուրը „Правда“ լրագրի նորից հրատարակվելու մասին վաղաժամանակ է։

Ս. Պետերբուրգ, 9 դեկտեմբերի։ Լրագիրները հաղորդում են, որ ֆինանսների մինիստրութեան մէջ, նոյեմբերի 23-ի թարթագրոյն հրամանը կատարելու համար, մասագիր են ադի մաքսահարկը ոսկով չը փոխելու։ Ադգպիսով մաքսահարկը 30% կը փոքրանայ։

Լօնդոն, 8 դեկտեմբերի։ Նատալի նահանգապետը հեռագրում է. Տրանսվալի 5,000 բնակիչները վերցրին Դէյվիսբերգ, հիմնեցին հանրապետութիւն, Բրիւգերին նախագահ նշանակեցին, Գուբերին՝ պատերազմական հրամանատար։ Գոյ վրա կռիւ չը պատահեց։ Բերի հաղորդագրութիւնը Տրանսվալ կայարանից ընդմիջված է։ Նահանգապետի ձեռքին եղած բոլոր զօրքերը ուղարկված են ուր հարկն է։

Խմբագիր—Տպագրող ԳՐԻԳՈՐ ԱՐԾԲՈՒՆԻ

երիտասարդները, որովհետև նոքա կը հասկանան, որ միակ մեր շարժումը նոցա ուսում տալու եղել է մեր կողմից սէրը, հակայ զօրութիւնը, որը ամենն բարեգործութեան հիմքն է։ Նոքա չեն կարող մոռանալ այդ սէրը, վասն զի բարձր ուսումը չէ խանգարում, չէ փչացնում մարդուս բարոյականութիւնը, այլ ընդհակառակ, աւելի զարգացնում, աւելի կոկում է այդ յատկութիւնը, ուրեմն մեր սէրը վայելող անձը իրեն սրբազան պարտք կը համարէ երախտամոռ չը լինել, այլ ի բոլոր սրտ կաշխատէ նոյն սէրը վերադարձնել մեզ ուրիշ ուրիշ ճանապարհաւ, մեր սերունդի ձեռքով։ Այս մտաւորապէս փարիզի հայ ուսանողութեան հիմքը և այդ հիման վրա կատուցած ընկերութեան նշանակութիւնը։

Շատ կամեսամ, որ չեմ կարող այստեղ տեղատրել ընկերութեան կանոնադրութիւնը, դա արդէն տպագրված էր «Մշակի» էջերում և մասամբ վերջինիս ջոյրով այժմ ընկերութեան անդամց թիւը հասած է 94-ի, իսկ ժողոված փողի գումարը 1,500 ֆրանկի. յուսամք, որ այդ թիւերը կը տատանվեն, վասն զի այժմ նոքա չատ փոքր են, որ կարելի լինէր գործը սկսել։ Եթէ ցանկացողք լինեն տանալ աւելի հիմնաւոր տեղեկութիւններ ընկերութեան մասին կամ նորան անդամ գրվել, նա կը խնդրէի այդ պարտներին գրեմ ընկերութեան նախագահ պ. Սիմէոն Ռաֆայէլեանին յետագայ հասցէով, Paris, 27 Rue Faubourg, St.-Jaques, Simeon Raphaëlian։

Բացի դրանից Փարիզի հայ ուսանողութիւնը մի ուրիշ գեղեցիկ գործ է սկսած, որը կրկին օգնութեան կը սպասէ, բայց այդ օգնութիւնը աւելի պէտք է սպասել մեր լրագրների մեծապատիւ խմբագիրներից և այլ հեղինակներից, քան թէ միաներից, թէպէտ և այստեղ միաների մասնակցութիւնը աւելորդ չեմ համարի, այդ գեղեցիկ գործն է ուսանողների հայոց ընթերցարան և թանգարան բաց անելը։ Ահա ինչ կը գրէ ինձ պ. Սիմէոն Ռաֆայէլեանը իր նամակի մէջ այդ ընթերցարանի մասին։ «Ընթերցարանի և թանգարանի խնդիրը, ինչպէս պատիւ ունեցայ ձեզ, ասելիք բարեկամ, յայտնելու, արդէն որոշված էր, այժմ կատարելագործութեան շրջանը մտաւ. Rue Feullantine, թիւ 47, բնակարան մը վարձեցինք տարեկան 600 ֆրանքի, երեք սենեակով. սենեակներէն երկուքը վարձով կը տանք մեր ուսանողներից ցանկացողներին, իսկ երրորդը պիտի լինի ընկերութեանս ընթերցարանը։ Ընկերութեանս ընթերցարանն սակայն, ըսել չեմ ուզեր, թէ միայն ընկերաց պիտի յատկանայ սա, այլ զի սա ընդհանուր հայ գաղթականութեան համար բաց պիտի լինի, թէ սոքա լինին Փարիզ բնակող, թէ ճանապարհորդ։ Ընթերցարանը բաց պիտի լինի առաւօտեան 10-էն մինչև գիշերվան տասը։ Բնակարանը մեզ պիտի յանձնվի յունվարի 1-ին (նոր տ.), ամենիրպէսք պէտք եղած կահկարասիքը պիտի գնենք։ Մտադիր եմ ընթերցարանի բացման օրը հանդիսաւոր առնալ, բոլոր փարիզաբնակ հայոց հրաւէր պիտի կարդամ, և մեր օրերս ալ լրագրաց միջոցաւ ազդարարութիւն մը պիտի ընեմ հրապարակաւ։ Շնորհաւորս կը կացուցանէիք զմեզ, եթէ վաղիս ձեր նամակը «Մշակին» գրէիք, այս տեղեկութիւնները ալ ձեր ասելիքներու վրա աւելցնելով։ Եթէ կարենամք ռուսերէն և վրացերէն լրագրեր ալ ունենալ, օգտակար պիտի լինին, զի Փարիզ գտնվող վրացիք, ուր անձինք են, ռուսաց թանգարանէն զոհ չեն և գիրաւ պիտի կարենանք մեր կողմը քաշել և չափիլ հայք աւելի հեշտութեամբ կարող են կենակցել վրացոց հետ, քան թէ ռուսք»։

Ինչպէս ինձ յայտնի է Ցանկստանի հայ լրագրաց խմբագիրները յօժարութիւն են յայտնել ուղարկել իրանց լրագիրները ուսանողաց ընթերցարանին, միթէ մեր ռուսարնակ խմբագիրները խուլ կը մնան նրանց խնդրվելն և չեն հետեւի իրանց համագրած եղբարց բարի օրինակին. ոչ, ես համոզված եմ, որ պատուական «Մշակը» առաջինը կը կատարէ եռանդով լի հայ երիտասարդաց թախանձը և նրա օրինակին կը հետեւեն «Արևելք Հայաստանի», «Մշակի», «Փորձի», «Աբարատի» և «Փարոսի» մեծապատիւ խմբագիրները։ Թէպէ կը նշանակվի մեր խմբագիրների և հեղինակների համար իրանց ազնիւ տարեգրքից մի մի օրինակ ուղարկել այդ նորաբոյս ընթերցարանին. ռուսաց առածը կասէ՝ «ամենքից մի մի թել—աղքատին շապիկ կը լինի»։ Թող չասենք, թէ այդ էլ գարգակ բան է, մեր այժիր վեր է։. Եթէ ամեն գործի, ամեն սկզբան այդպիսի վերնագիր մի տանք, այն ժամանակ միայն մի բան կը մնայ, որ մեր այժիցը վեր չի լինի—այն է պատկել ի գերեզման և քնել յաւիտենական քնով, դրա համար ոչ մի աշխատանք, ոչ մի զոհաբերութիւն հարկաւոր չէ. պառկեցիր հանգիստ գերեզմանի մէջ, փակեցիր աչքերդ, դադարեց սրտիդ բաբախումը և ամեն բան վերջացաւ, ոչնչացաւ քեզ համար՝ բարեկամ, ազգ, ուսանողութիւն, ընկերութիւն, ընթերցարան և այլն։ Բայց մինչդեռ աչքերդ բաց են, ուզեղդ կը բանի, արիւնդ երակների մէջ կը հոսայ, մինչ այն ժամանակ էլ այդ բոլորը քեզ համար ոչնչացած է, անհետացած է. էլ ինչ զանազանութիւն կայ քո և գերեզմանում պառկողի մէջ.....

Կար ժամանակ, որ Փարիզի մէջ մնաք ունէինք լրագիր (Մասեաց Աղաւնի), ունէինք ուսումնարաններ (Խրիմեան և Մուրատեան), ունէինք գիտնականներ (Թէոդորեան, Ալվանեան, Գալֆայեաններ). այսօր ոչինչ չը մնայ մեզ նորանցից, բոլորն էլ ոչնչացաւ, անհետացաւ, գերեզման պառկեց։ Եթէ մինչև այժմ մնացել էր փարիզի մէջ մի չնուութիւն (Մուր. ուսումն. չնչքը), որի պատերին խորթ չէր թեռմ հայոց լեզուն, այժմ մեր անհոգութեամբ այդ չնուութիւնն էլ գնաց մեր ձեռքից, այսօր նա էլ կը կորչի հայ լեզու ասելու իր քրջ, Ամստերդամի հայոց եկեղեցւոյ օրինակին հետեւելով։ Եւրօպացին երբ մի քաջաբված մատուռ կը գտնէ, մի խորտակված քերդ կորնի, իսկոյն նրա չորս կողմը պատ կը քաշէ, պատապան կը կանգնեցնէ, որ հնութեան յիշատակը չը կորչի, չանհետանայ. բայց մենք ունեցածը կորցնում ենք սառնասրտութեամբ, քանզում ենք մեծ աշխատանքով, կարծես թէ նա մեզ պարտաւոր է, անթի է բերում մեզ, իսկ նորի համար ասում ենք «զարգակ բան է, մեր այժից վեր է»։ Հայը կը վախճանվի փարիզի մէջ, կամ նրան որդի կը ծնվի, քահանայ չը կայ, որ քրիստոնէական եկեղեցու կարգը կատարէ. կամ՝ օրի պաշերն էլ չէ կամենում այդ կարգը կատարել, որովհետև մեռնողը չէ արժանացել պապի հողմաթափը համբուրելու, իսկ ծնվածը չը պէտք է դատնէ նրա անուխաչականութիւնը, այդպիսով մեռածը թաղվում է իբրև մի կենդանի (բայց ոչ իբրև մարդ. կապատանին անգամ մի ձէս են կատարում իրանց մեռածի վրա), իսկ ծնվածը մեծանում է երկնքի թռչունի պէս առանց հաւատի և առանց կրօնի. մեր հաստատարներն էլ Երևանի և վաղարշապատի այդեների մէջ ճանապարհին ու ագռաւներին են քարոզում Գրիգորի հիմնած եկեղեցու դատանութիւնը մէջ, դարգակ բան է...»

«Ողորմ գլեղ հայոց աշխարհ.....»

Գ. Մելիք-Թէղլարեանց